

Translations from Armenian into Spanish, 1991 to date

a study by the Next Page Foundation in the framework of the Book Platform project

conducted by Ararat Ghukasyan¹
2012

¹ Ararat Ghukasyan is a freelance translator.

Արևելյան հարևանության երկրների թարգմանական քարտեզագրում Հայերեն-իսպաներեն

I. ՆԱԽԱԲԱՆ

Հետազոտությունը, որը ներկայացվում է ընթերցողի դատին, կատարվել է հայաքիչ մի երկրում, որտեղ թերևս (կամ դեռևս) բավականաչափ ծանոթ չեն հայկական մշակույթին և առավել ևս՝ հայ գրականությանը: Մա գուցե մեր՝ հայերիս թերացումն է, սակայն պետք է խոստովանել, որ վերջին ժամանակներս հայկական մշակույթը հավուր պատշաճի ներկայացվում է տեղաբնակ հասարակությանը, և մոտ ապագայում այն իր ուրույն տեղը կունենա օտարալեզու մշակույթների խճանկարում:

1. «Աշխարհի եզրագիծը» կամ իբերների երկիրը



Աշխարհում ավելի քան 600 միլիոն մարդ խոսում է **Սերվանտեսի** լեզուն՝ **իսպաներենը**: Որպես մայրենի լեզու օգտագործող մարդկանց քանակով այն երկրորդն է աշխարհում՝ **չինարենից** հետո: Իսպաներենը կամ **կաստեյանոն** ՄԱԿ-ի 6 առանցքային լեզուներից մեկն է և պետական լեզու է համարվում **24** երկրներում:

Եվրոպան՝ ըստ Ստրաբոնի

Ահա այս չափազանց կարևոր լեզվի հայրենիքը **Իսպանիան** է, մի երկիր, որի անվան արմատը ժամանակակից լեզվագիտությունը փնտրում է **փոյուզերենում** կամ **արամեերենում**: Փոյուզացիներին **Հերոդոտը** համարում է **արմեններ**, իսկ ահա հայկական արմատ ունեցող արամեերենից թերևս ծնունդ առավ մեսրոպատառ հայերենը:



Այս երկու լեզուներում Իսպանիա նշանակում է «**հյուսիսի երկիր**», թեև այն ոչ մի կապ չունի հյուսիսի հետ: Պարզապես փոյուզացիներն ու **փյունիկցիները** «հյուսիս» ասելով հասկացել են «**երկրի եզրագիծը**», ասել է թե՛ սպառվելը «**Իսպառ**» վերջանալը: Ահա այդ «Երկրի Վերջում» **Ի-սպա**-նիայում, հնագույն ժամանակներից ի վեր բնակվում էին **իբերները**, ովքեր ներգաղթել էին **Վիրքից՝ Հայքի** «վերևում գտնվող տարածքներից»: Հատկանշական է, որ հին հայերը **վիրքցիներին** կամ **վրացիներին** ոչ թե ազգ են համարել, այլ «վերևի բնակիչներ», հավաքված, «**ի (մի) բերված**» ժողովուրդներ, որոնց հայկական



ծագումն այլևս կասկած չի հարուցում: Նույն այդ «ի (մի) բերված», հավաքված ցեղերն էլ **Պիրենեյան** թերակղզում հաստատվելուց հետո այն անվանել են **Իբերիա**:

Եվ որտե՞ղ են սկզբնապես հաստատվում իբերները: Իսպանական պատմագրության մեջ թերակղզու նախնական բնակեցված վայրը կոչվում է **Իսաբա (Izaba)**: Այն գտնվում է ներկայիս **Նավարայում**, որ հետադարձ կընթերցվի **Արավան (Արայի վան-շեն)** ձևով: Այս բնակավայրի քարանձավներում **բասկ** հնագետ **Խավիեր Արմենդարիզը** (ուշադրություն դարձրեք ազգանվանը) հայտնաբերել է «կանաչ մարդկանց» կմախքներ, որոնք թվագրվում են **մ.թ.ա. IV-III հազարամյակներով** և որոնց գանգերը ուսուսմնասիրելուց հետո պարզվել է, որ նրանք եղել են **արմենոիդներ**:

Նրանք կանաչ են կոչվել իրենց կմախքների կանաչ գույնից, որը ստացել են **պղնձի** մշակումից: Հիշեցնենք, որ մետաղամշակությունը թերակղզում ծնունդ է առել հենց մ.թ.ա. III հազարամյակում, ժողովուրդների առաջին **Մեծ գաղթի** ժամանակ:



Խավիեր Արմենդարիզը Իսաբայում «կանաչ մարդկանց» հայտնաբերման ժամանակ

Ներկայիս նավարացիներն իրենց համարում են բասկեր, ովքեր էլ, իրենց հերթին, համարվում են **Պիրենեյների** առաջին բնակիչները: Իսկ ովքե՞ր են բասկերը:

Բասկ պատմաբան **Բեռնարդո Էստոռնես Լասան** նշում է, որ բասկերը հայերի հետնորդներ են, ովքեր իրենց հայրենիքի բազմաթիվ աշխարհա-գրական անուններ գրեթե անփոփոխ պահպանել են նոր իրականության մեջ: Նա նշում է, որ «**Այտորը**, բասկերի առաջնորդը, իր յոթ զավակների հետ գաղ-թել է Հայաստանից»: Ահա նույն Այտոր անվանումը **Վահան Սարգսյանը** մեկնաբանում է «հայի կամ **Հայկի** զարմիկ» բառակազմությամբ: Թեև այն ավելի շուտ կարելի է վերծանել «**հայի թոռ**» ձևով: Իրականում, Հայկի թոռներից մեկի անունը **Պասկամ** է եղել, որն էլ հենց բասկ և **Բասկոն** անունների նախահիմքը կարող է հանդիսանալ: Այն գյուղը, որտեղ բնակություն են հաստատում եկվորները, կոչվում է **Էրմինիա**: Հենց ինքը, Այտորը, մոտակա գետն



անվանում է **Արաքսես**, իսկ գետը շրջապատող լեռները՝ **Արալար (Aralar-Արա լեռ կամ Արարատ)**: Իսկ ահա Հայկի մյուս հետնորդ հսկա **Տորթ Անգեղը** բասկերենով հնչում է **Տորտո Անչո (Torto Ancho)** ձևով:

Աշխարհագրական և անհատական համանունների շարքը կարելի է շարունակել.

Urumea (գետ)- արիմ-ուրումեացիների անունից, նաև՝ Ուրմիա լիճը



Uriatre- Ուրարտու

Artasat - Արտաշատ

Aran-Արամ

Arzaluz- Արշալույս

Arzak-Արշակ



Արաքսես գետը և Արալարի լեռները Նավարայում

Հայ և բասկ էթնոլեզվական նմանությունների հարցն առաջին անգամ առաջ է քաշվել XVI դ. բասկերի պատմագիտության երեք հիմնադիրների՝ **Անդրես դե Պոսայի, Էստեբան Գարիբայի և Բալտասար դե Էչավեի** կողմից, ովքեր գլխավորապես հիմնվում են աշխարհագրական անունների նմանության վրա: Վերջինս **Մեխիկոյում** հրատարակած «**Վիճաբանություններ**» աշխատության մեջ **Պախա Բասկոյի** պատմությունն սկսում է հայերի արտագաղթից և ավարտում՝ **Ամերիկաների** հայտնագործմամբ:

XVII դ. սկզբներին իսպանացի պատմիչ **Գասպար Էսկոլանոն**, հիմնվելով արդեն գոյություն ունեցող ուսումնասիրությունների վրա, գրում է, որ Իբերիա թերակղզու առաջին բնակիչները եղել են հայերը՝ **հսկաների մի ցեղ**, որի հետնորդները կարող են համարվել բասկերը: Այս առումով բասկագետ **Վահան Սարգսյանը** հետաքրքիր փաստ է արձանագրում. «Նույն ժամանակաշրջանում Ամերիկայում գիտեին, որ բասկերի նախնիները հայերն են եղել, իսկ բուն Հայաստանում այդ մասին տեղյակ չեին»:

2. *Խոսում են լեզվաբանները.*

Մինչև XIX դ. բասկերի հայկական ծագման թեզը հիմնավորվում էր միայն աշխարհագրական անունների նմանությամբ՝ առանց ընդգրկելու լեզվաբանական, մարդաբանական, ազգագրական և այլ գիտությունների տվյալներ: Այս բացը լրացնելու նախաձեռնությունը ստանձնեց գերմանացի լեզվաբան **Հուբշմանը**, ով հայերենը դասեց հնդեվրոպական լեզվաընտանիքում որպես առանձին ճյուղ: Նույն ժամանակ էլ բասկագետները հայտարարեցին, որ բասկերենն անկախ լեզու է:

Անգլիացի հայտնի բասկագետ **Էդվարդ Սպենսեր Դոդգսոնը** բասկերենում հայկական արմատ ունեցող ավելի քան **50 բառ** գտավ և **1895 թ.** հրապարակեց «**Էուսկերա**» օրաթերթում: Այդ բառերից են **tchar** բառը, որ հայերենում նույն նշանակությունն ունի՝ **չար, ura-ջուր, lur-հող** և այլն:

Այս ոլորտում աննախադեպ աշխատանք է կատարել անգլիացի լեզվաբան **Ժոզեֆ Կարստը**, ով 30 տարի հետազոտությունից հետո, 1928 թ. հրատարակում է «**Ալարոդներն ու նախաբասկերը**» աշխատությունը, որտեղ նշում է. «**Էսկուարան և նախահայերենը** նույն լեզվաբանական հիմքն ունեն և, ամենայն հավանականությամբ, թեթև փոփոխությունների են ենթարկվել»: Նույն թվականին հանրաճանաչ գիտնական **Նիկոլայոս Մարը** ֆրանսերեն լեզվով հրատարակում է «**Բասկերենի հարեթյան ծագումը**» գիրքը, որտեղ խնդրո առարկա երկու լեզուների միջև բազմաթիվ նմանություններ է մեջ բերում: Նույն և ավելի ընդհանրություններ առաջ է քաշում **Հրայա Աճառյանը** «**Հայոց լեզվի ամբողջական քերականություն**» գրքում:

1993 թ. Երևանի Պետական Համալսարանում Վահան Սարգսյանի ջանքերով հիմնադրվում է **Բասկ-Հայկական Հետազոտական Կենտրոն**, որը ձեռնամուխ է լինում ի մի բերել բոլոր առկա տվյալները, դրանց հիման վրա կազմել նոր տեսակետներ և դրույթներ: Շնորհիվ կենտրոնի անդամների, ընդլայնվում է նաև ուսումնասիրությունների դաշտը՝ ընդգրկելով նաև քերականությունը: Հենց այս ոլորտում նմանություններն առավել քան ցայտուն են. հայերենի «**ք**» (**կ**) հոգնակի վերջածանցը բասկերենում նույնպես օգտագործվում է: Իսկ ածականները չափազանցորեն շեշտելու համար երկու լեզուներում էլ օգտագործվում է -գույն (-կույն) վերջավորությունը:

Վերոհիշյալ բոլոր ուսումնասիրություններից գատ, կցանկանայի լեզվական որոշ նմանություններ մեջ բերել Իբերիա թերակղզում դոմինանտ և **լատիներենին** ամենամոտ իսպաներենի (կաստեյանո) և հայերենի միջև: Հայկական լեռնաշխարհը լքած արտագաղթողները «ջանացել են» հնարավորինս անփոփոխ պահել գոնե հաճախակի օգտագործվող բառերը: Ահա ինքս հայտնաբերել եմ նույնարմատ մոտ 90 բառ, որոնցից ներկայացնում եմ մի քանիսը.

ամ-añ(o)



ամիս-**mes**

այս(օր)-**hoy**

լույս-**luz**

փայտ-**pal(o)**

բահ- **pal(a)**

փոս-**fos(o)**

կլոր-**glob(o)**

աստղ-**astr(o)**

օջախ- **hogar**

վայր (արտ)-**valle** (վայե, իսպաներենում **ll** երկհնչյունը կարդացվում է յ)

անկյուն- **angul(o)**

երկաթ-**hier(ro)**

եթեր-**eter**

առու- **río**

լվանալ- **lavar**

մտնել- **meter**

մատաղ- **matar** (սպանել)

պատ- **pared**

հուր- **fuego**

նավ- **nave**

3. Հայերենից իսպաներեն թարգմանված գրականություն

Մի գուցե այս բաժնի նախորդ երկու գլուխները չներկայացվեին ընթերցողի ուշադրությանը, եթե հայերենից իսպաներեն կատարած թարգմանչական գործը հարուստ ավանդույթներ ունենար: Սակայն ցավոք դա այդպես չէ, չնայած որ երկու ժողովուրդների պատմական անհիշելի անցյալն իրականում պիտի որ հակառակն ապացուցեր: Ինչևէ, այս բացը թերևս գալիս է նրանից, որ Իսպանիայում հայկական գաղթօջախը խոր արմատներ չունի և չի էլ



ունեցել: Բայց և այնպես մի պատմական իրադարձության մասին կուզենայի հիշատակել, որը, կարծում եմ, պակաս հետաքրքրաշարժ չէ:



Մադրիդում «**ԼԵՎՈՆ V ՀԱՅ**» անունը կրող մի փողոց կա, որն անվանվել է **Կիլիկիայի վերջին Լևոն** թագավորի պատվին: Հայ թագավորին փրկագնով **Եգիպտոսի մամլուքներից** ազատել էին **Կաստիլիայի և Արագոնի** թագավորները հետագայում նվիրաբերելով Լևոնին **Մադրիդը, Վալյադոլիդը և Անդուխարը**: 1383 թ. հայ արքան անվանվում է **Լևոն I**, ում շնորհվում է **Մադրիդի իշխան** (առաջին և ցայսօր միակ) տիտղոսը (**Señor de Madrid**): Այս իրադարձությունից հետո Լևոնը հայտարարում է «**Մադրիդը՝ Հայաստանի մայրաքաղաք**»:

Լևոն V

Այս անցքերից մոտ մեկ դար անց, **1493 թ.**, **Մարտիրոս Երզնկացի** անունով մի հայ քահանա, եվրոպական երկարատև դեգերումներից հետո, հայտնվում է Իսպանիայի ամենահարավային քաղաք **Կադիսում**: Մինչ այդ նա **Հռոմում** հանդիպել էր **Պապին** և նրանից ստացել պատվոգիր: Հենց այս պատվոգիրն էլ հաշվի առնելով՝ Մարտիրոս Երզնկացուն ընդունում են **Քրիստափոր Կոլումբոսի** արշավախմբում, որի հետ նա հասնում է Ամերիկա: **Կուբայում** տեղացիների հետ շփվելու համար օգտագործվել է յոթ լեզու, որոնցից մեկը՝ հայերեն, շնորհիվ հայ քահանայի: Վերջինս գրի է առնում ողջ իր ճանապարհորդությունը, որը վերձանում է **Վիզեն Խեչումյանը**:

Դեռևս **15-16-րդ դդ.** իսպանական Կադիս քաղաքում հաստատվել էին հայ առևտրականներ, ովքեր յուրօրինակ մի հայկական համայնք էին ստեղծել՝ շնորհիվ այն նվիրատվությունների, որոնք նրանք արել էին **Սանտա Մարիա** եկեղեցուն: Հենց նույն եկեղեցում ստեղծվում է «**Հիսուս Նազովրեցի**» հայկական եղբայրությունը, որը մեծ դեր է ունենում քաղաքի սոցիալ-մշակութային և կրոնական կյանքում:

Ահա այս ամենով հանդերձ, հայկական գաղթօջախ և, հետևաբար, հայկական համայնք, որպես այդպիսին, այնուամենայնիվ, Իսպանիայում չի ստեղծվում ընդհուպ **մինչև XX դարի վերջերը և XXI դարի սկզբները**: Հենց այս համայնքի ներկայացուցիչներից մեկն է նաև այս տողերի հեղինակը, ով կփորձի հնարավորինս ճշգրիտ ներկայացնել հայերենից իսպաներեն թարգմանչական, այսպես ասած, նորելուկ ավանդույթը:

Ինքս ներկայացնում եմ **Վալենսիայի «Արարատ» Հայկական Միությունը**, և ամենայն պատասխանատվությամբ կարող եմ նշել, որ հայերենից իսպաներեն թարգմանված աշխատանքները մեծագույն դեր են խաղում (և կարող են

առավելագույնս խաղալ, եթե հիմք դրված ավանդույթը շարունակվի) ոչ միայն համայնքային կյանքում, այլ նաև իսպանական շրջանակներում, որտեղ, ինչպես արդեն նշել էի, քիչ են իրագրել հայ գրականությանը:

Այն աշխատանքները, որոնք կներկայացվեն այս հետազոտության մեջ, սկիզբն են հանդիսանում Իսպանիայում հայերենից իսպաներեն թարգմանչական արվեստի: Այլ է պատկերն իսպանախոս այլ երկրներում, ասենք՝ **Արգենտինայում** կամ **Ուրուգվայում**, ուր համեմատաբար ավելի շատ աշխատանքներ են թարգմանվել հայերենից: Սա, իհարկե, խոսում է **Լատինական Ամերիկայի** երկրներում հայկական հզոր և բազմամյա համայնքների մասին:

Այսպես ասա, մինչ օրս Իսպանիայում հայերենից իսպաներեն թարգմանված միայն երեք գիրք կա՝ **Արա Միմոնյանի «Հուսո կանթեղ»** աշխատությունը, որը երկրում հրատարակված առաջին հայկական բանաստեղծությունների ժողովածուն է, **Անի Խաչատրյանի «Հայ գրականության տեսություն»** գիրքը, որն ընդգրկում է չորս հայ դասականների՝ **Նար-Դոսի, Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Թումանյանի և Դերենիկ Դեմիրճյանի** ստեղծագործությունները, և **Աշոտ Արծրունու «Հայ ժողովրդի պատմություն»** աշխատությունը: Տպագրվել է նաև **Մեղա Ղազարյանի «Հայերեն-իսպաներեն բառարան»**-ը Իսպանիայում տպագրված առաջին նմանատիպ աշխատանքը:

Այսուհանդերձ, կաշխատեմ մեկնաբանել ոչ միայն վերոհիշյալ թարգմանությունները, այլ նաև՝ հայ և օտար հեղինակների, հայ իրականությանը վերաբերող, աշխատություններ՝ թարգմանված մեկ այլ լեզվից իսպաներեն, Հայաստանին, հային և հայկական մշակույթին վերաբերող իսպանացի հեղինակների գործեր և աշխատություններ, որոնք հայերենից իսպաներեն են թարգմանվել իսպանախոս մեկ այլ երկրում, ինչպես նաև՝ Հայաստանում:

II. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

1. Իսպանիայում հայերենից իսպաներեն թարգմանված գրականություն

- **Ara Simonyan “Lucerna de esperanza”** – Artes Gráficas Boysu s.l. – Mérida – 2003 (թարգմանիչներ՝ Մանուել Դոմինգես Մերինո և Անա Կաստիյո Մորենո) – poesía

Արա Միմոնյան «Հուսո կանթեղ» - հրատարակչություն՝ Artes Gráficas Boysu s.l. – Մերիդա – 2003 թ. - բանաստեղծություն

- **Ani Khachatryan “Antología de la literatura armenia”** – Ediciones Carena, 2010 (թարգմանիչ՝ Անի Խաչատրյան) – anotaciones históricas, novelas, relatos, biografías, antología

Անի Խաչատրյան «Հայ գրականության տեսություն» - հրատարակչություն՝ Ediciones Carena – Բարսելոնա – 2010 թ. – պատմական ակնարկ, վեպեր, պատմվածքներ, կենսագրություններ



- **Ashot Artzruni “Historia del Pueblo Armenio”** – Ediciones SIRAR – 2010
(թարգմանիչ՝ Ռուբեն Արծրունի) – historia
Աշոտ Արծրունի «Հայ ժողովրդի պատմություն» - հրատարակչություն՝
Ediciones SIRAR – 2010 թ. – հումանիտար-պատմական
- **Seda Ghazaryan “Diccionario armenio-español”** – Art Gráficas Soler sl - 2010
Սեդա Ղազարյան «Հայերեն-իսպաներեն բառարան» - գիտահանրամ.
2. *Հայ և օտար գրողների, հայ իրականությանը վերաբերող, գործեր՝
թարգմանված միջնորդ լեզվից իսպաներեն.*
- Անրի Վերնոյ «Մայրիկ»
Henri Verneuil “Mi madre” – Ediciones Internacionales SA – 1987
(ֆրանսերենից իսպաներեն, թարգմանիչ՝ Նելլի Բելուզի)
- Ֆրանս Վերֆել «Մուսա լեռան քառասուն օրը»
Franz Werfel “Los cuarenta días de Musa Dagh” - Editorial Losada, S.A. –
2003 (գերմաներենից իսպաներեն, թարգմանիչ՝ Նորա Գուտմանն)
- Ռենե Սյուլաշյան «Հայաստանի հեքիաթներն ու առասպելները»
Reine Cioulachtjian “Cuentos y leyendas de Armenia” – Editorial Anaya –
2005 (ֆրանսերենից իսպաներեն, թարգմանիչ՝ Անա Իսաբել Կոնեխո)
- Վիլյամ Սարոյան «Մարդկային կատակերգություն»
William Saroyan “La comedia humana” – Editorial Acantilado – Barcelona –
2004 (անգլերենից իսպաներեն, թարգմանիչ՝ Խավիեր Կալվո) –
գեղարվեստական, պատմվածք
- Վիլյամ Սարոյան «Իմ անունն Արամ է»
William Saroyan “Me llamo Aram” – Editorial Acantilado – Barcelona – 2005
(անգլերենից իսպաներեն, թարգմանիչ՝ Ջորդի Մարտին Յորետ) –
գեղարվեստական, պատմվածք
- Վիլյամ Սարոյան «Ուեսլի Ջեքսոնի արկածները»
William Saroyan “Las aventuras de Wesley Jackson” - Acantilado – Barcelona
2006 (անգլերենից իսպաներեն, թարգմանիչ՝ Ջորդի Մարտին Յորետ) –
գեղարվեստական, պատմվածք



3. *Աշխատություններ, որոնք հայերենից իսպաներեն են թարգմանվել իսպանախոս այլ երկրում.*

- Բաֆֆի «Կայծեր»

Raffi “Chispas” – Palabra Gráfica y Editora S. A. – Buenos Aires, Argentina – 1998 (թարգմանիչ՝ Բերգ Աջեմյան, 2 հատորով)

- Լացոդ լեռներ (հայ բանաստեղծների ստեղծագործությունների ժողովածու)

“Las montañas doloridas” – ARTES GRÁFICAS CANDIL, Buenos Aires, Argentina – 2003 (թարգմանիչ՝ Ստեփան Քալեջյան)

4. *Իսպանացի հեղինակների աշխատություններ՝ հայերի և Հայաստանի մասին*

- Խոսե Անտոնիո Գուրիարան «Ռումբը»

José Antonio Gurriarán “La bomba” – Editorial Planeta – 1982 - վեպ

- Գոնսալո Հերնանդես Գուարչ «Հայկական տոհմաձագ» – Ediciones del Bronce – 2002

Gonzalo Hernandez Guarch “El árbol armenio” - պատմավեպ

- Խոսե Անտոնիո Գուրիարան «Հայեր. Մոռացված ցեղասպանություն»

José Antonio Gurriarán “Armenios: genocidio olvidado” – Espasa Calpe – 2009

- Մարկ Մորտե «Արարատի զավակները»

Mark Morte “Los hijos del Ararat” – Ediciones Carena – 2008 - վեպ

- Խոսե Մարիա Կալ «Հայաստան. հպարտություն և կիրք: Զբոսաշրջության տեսական ձեռնարկ»

José María Cal “Armenia: orgullo y pasión. Guía visual de viajes” – RC EDICIONES – 2011 – հասարակական գիտություններ

- Անտոնիո Պասկուալ Գարսիա «Երկու ծովերի միջև»

Antonio Pascual García “Entre dos mares” – Editorial Circulo Rojo – 2012 - պատմավեպ

5. *Հայերենից իսպաներեն թարգմանված գործեր Հայաստանում*



- Ասյա Եղիազարյան «Մտորումներ» - ԱՄԱՐԱՍ – 2008 – բանաստեղծ.

Asya Yeghiazaryan “Reflexiones” - AMARAS – 2008 - poesía

6. Գրքարտադրությունն Իսպանիայում վերջին 10 տարիների ընթացքում

Վերջին 10 տարիների ընթացքում գրքարտադրությունն Իսպանիայում, ընդհանուր առմամբ, փոփոխական վայրիվերումների է ենթարկվել: Այսպես, օրինակ՝ 2006 թ. տպագրվել է **87.440**, իսկ 2010 թ.՝ **114.459** անուն գիրք: Իսկ նախորդ տարվա համեմատ գրատպությունն ավելացել է 117%-ով: Սա խոսում է այն մասին, որ ֆինանսական ճգնաժամն այնքան էլ նշանակալի ներգործություն չի ունեցել գրքարտադրության վրա:

Գրքերը մեծամասամբ տպագրվում են Իսպանիայի դոմինանտ լեզվով՝ **կաստեյանոյով** (70%), թեև տպագրվել են գրքեր նաև **կատալաներենով** (15%), **վալենսիանոյով** (10%) և մյուս դիալեկտներով (5%):

Յուրաքանչյուր անուն գրքի միջին տպաքանակը հասնում է մոտ **2.500**-ի:

2010 թ. դրությամբ Իսպանիայում գոյություն ունի **3473** հրատարակչատուն, որոնցից միայն **540**-ն են հասարակական:

Իսպանիայում ամեն տարի տպագրվող գրքերի մոտ **30%** թարգմանություններ են: Դրանց մեծ մասը, մոտ **60%**, թարգմանվում է անգլերենից, **40%**՝ մնացած լեզուներից:

Այս տվյալներն արձանագրել է **Վիճակագրության Ազգային Ինստիտուտը**: Կարծում եմ, արդեն հասկանալի է, թե հայերենից թարգմանված գրքերը տոկոսային ի՛նչ ցուցանիշ են արձանագրում Իսպանիայում (միայն 3 գիրք՝ թարգմանչական մշակույթի ծննդից ի վեր):

III. ՀԱՅԵՐԵՆԻՑ ԻՍՊԱՆԵՐԵՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԺԱՆՐԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ



Արա Միմոնյան «Հուստ կանթեղ»

Ara Simonyan “Lucerna de esperanza”

բանաստեղծություններ

Տպագրվել է **2003 թ. Մերիդայի Artes Gráficas Boysu s.l.** հրատարակչատանը:



Ստեղծագործությունները թարգմանել են՝ գրող, բանաստեղծ, երգահան, Մերիդայի Երգչախմբի դիրիժոր **Մանուել Դոմինգես Մերինոն** և ուսուցչուհի, բանաստեղծուհի, Մերիդայի Բանաստեղծների և Մադրիդի «Պրոմեթևս» միությունների անդամ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր **Անա Կաստիյո Մորենոն**:

«Հուսո կանթեղ» բանաստեղծությունների ժողովածուն Հայաստանում լույս է տեսել 1993 թ.:

Արա Միմոնյանը ծնվել է 1953 թ. Վանաձորում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև սովորել է Թատրոնի դպրոցում, իսկ 1975 թ. ավարտել **Մանկավարժական ինստիտուտը**՝ գրականագետի և լրագրողի մասնագիտությամբ: Նույն թվականին նշանակվել է «**Կայծ**» թերթի Մշակույթի և Գրական բաժնի ղեկավար: 1991-1995 թթ. ընթացքում հիմնել և խմբագրել է «**Առավոտ լուսո**» թերթը: 1995-1999 թթ. եղել է «**Նոր դար**» հանդեսի թղթակից-անդամ: Գրել է բանաստեղծություններ, պիեսներ, պատմվածքներ և 100-ից ավելի հոդվածներ: 2000 թ. ի վեր բնակվում է Իսպանիայի **Մերիդա** քաղաքում: Անդամ է **Հայաստանի և Մերիդայի Գրողների միությունների**:



Իսպանիայում բնակվող հայ մտավորականների, այսպես ասած՝ «որսը», սկսվեց 2008 թվականից, երբ իմ իսկ խմբագրությամբ հիմնադրվեց երկրում առաջին և ցայսօր միակ հայատառ թերթը՝ «**Հայրենիք**» շաբաթաթերթը, որի էջերից մեկն անվանվում է «**Հայերն Իսպանիայում**»: Այս էջում զետեղվում են իսպանահայությանը և իսպանաբնակ հայ մտավորականությանը վերաբերող նյութեր: Ասել է թե՛ Արա Միմոնյանի գործունեությունը մի առանձնակի տեղ է գրավում մեր պարբերականում, որի «**Գրական էջում**» տպագրվում են նաև հայ բանաստեղծի ստեղծագործությունները:

“Lucerna de esperanza” գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2010 թ. **Միսլատայի (Վալենսիա) Մշակույթի Կենտրոնում**՝ «Արարատ» Հայկական Միության նախաձեռնությամբ: Ուրախությամբ պետք է արձանագրեմ, որ նման շնորհանդեսներն իրապես օգնում են հայկական մշակույթի, ընդհան-բապես, և հայ գրականության, մասնավորապես, ծանուցմանն ու զարգացմանը իսպանական շրջանակներում:

Արա Միմոնյանի բանաստեղծությունների ժողովածուն մի հիանալի հնարավորություն էր՝ ներկայացնելու հայ բանաստեղծական ոճը: Պետք է արձանագրել, որ թարգմանության ասպարեզում ամենադժվարին ժանրը բանաստեղծական ժանրն է, քանզի այստեղ, բացի ճիշտ թարգմանությունից, պետք է հաշվի առնել նաև բանաստեղծական ռիթմն ու հանգավորումը: Նաև պետք է նշել, որ իսպանական գրականության մեջ բանաստեղծության ժանրում այդքան էլ ուշադրություն չի դարձվում ռիթմին և հանգավորմանը: Ի



տարբերությունն հայ բանաստեղծությանը, իսպանական բանաստեղծության ցանկացած տող մեծատառով չի սկսվում, եթե նախորդ տողում վերջակետ չի դրված: Այս առումով Արա Միմոնյանի ստեղծագործության թարգմանությունն այդքան էլ դժվարություններ չի հարուցում: Ահա ներկայացնեմ դրանցից մեկը.

ՀԱՅԱՍՏԱՆ

ARMENIA

Դու սկզբում մեր տունն էիր-

Desde el principio tú fuiste nuestro hogar,

հորովս, մորովս, տատովս...

con mi padre, mi madre, con mi abuela...

Հետո դու մեր բակն էիր

Luego te convertiste en el patio entrañable

ու մեր թաղը:

de mi casa

Հետո դարձար Այբուբեն,

y fuiste nuestro barrio.

ուսուցիչ,

Te transformaste luego en nuestro abecedario,

քարտեզ...

en nuestro

Ապա՝ ընկերներ, Գառնի, Երևան...

mapa...

Եվ ես հասկացա,

Después, en los amigos, en Ereván...

որ Դու մաս-մաս կաս մեր ամենքի մեջ:

Y al fin supe,

Հայաստան,

que tú eres un poquito de todos.

Դու նաև

Mi Armenia,

ծնվելիք զավակս ես մանուկ:

también tú

eres mi futuro hijo.

Տարբեր են նաև թեմաները. եթե հայ բանաստեղծության մեջ հեղինակը կարող է երգել բնություն, զարուն, ամառ, աշուն, ձմեռ, հայրենիք, սեր, կարոտ, թախիծ, ցեղասպանություն և այլն, ապա իսպանական բանաստեղծության մեջ տարվա եղանակներից միայն ցայտուն կերպով է արտահայտվում ամառը, իսկ բնության մեջ՝ ծովը, ծովափն ու արևը: Բնակլիմայական այս պայմաններից է ծնվում նաև սերը, որը գրեթե սահմաններ չի ճանաչում և մերկ է ներկայանում ընթերցողին:

Հայ քանաստեղծությունն իսպաներեն թարգմանելու հանձարեղ գործ է կատարել 1915 թ. Արևմտյան Հայաստանում ծնված և ցեղասպանությունից մազապուրծ արգենտինահայ **Ստեփան Քալեջյանը**, ով թարգմանել է 21 հայ դասական քանաստեղծների հանրաճանաչ գործերը: Նրա **“Las montañas doloridas”** աշխատությունը լույս է տեսել Բուենոս Այրեսում 2003 թ.: Ահա **Հովհաննես Շիրազի** քառյակներից մեկի թարգմանությունը.

Se derramó tanta sangre armenia de nuestro sufrido pueblo,

que hasta las azucenas se convirtieron en rojas flores.

De entonces, ellas, temerosas, ocultan tu triste rostro,

pues la media luna les recuerda el corvo sable del impío verdugo.

Հովհաննես Շիրազ, թարգմանությունը՝ Ստեփան Քալեջյանի

Ինքս թարգմանել եմ Պարույր Սևակի «Քիչ ենք, բայց հայ ենք» գլուխգործոցը, և պետք է խոստովանեմ, որ հանդիպել եմ աննկարագրելի դժվարությունների.

Somos pocos, pero nos llaman armenios,

Superiores a nadie no nos sentimos.

Simplemente debemos asumir de más,

Que solo nosotros tenemos Ararat.

Y que es aquí, en alto Sevan,

Donde el cielo copia su propio color.

Simplemente David combatió aquí,

Simplemente Narek se escribió aquí.

Simplemente sabemos construir templos de una roca,

Modelar peces de una piedra y pájaros de cerámica.

Para enseñar, también aprender

De lo bueno,

Lo noble y lo sublime...

Somos pocos, pero nos llaman armenios,

Translations from Armenian into Spanish, 1991 to date

Superiores a nadie no nos sentimos.

Simplemente otro ha sido nuestro destino.

Simplemente mucha sangre hemos derramado.

Simplemente en nuestra vida milenaria,

Cuando éramos muchos y éramos fuertes,

No oprimimos a otra nación.

Nadie fue golpeado por nuestro puño.

Si conquistamos,

Solo con nuestros libros,

Si dominamos,

Solo con nuestros talentos.

Simplemente la muerte se nos enamoró.

Nosotros a ella no nos entregamos.

Y cuando nuestra tierra obligados abandonamos

Allí donde llegamos, donde estuvimos,

Nos esforzamos por todo el mundo:

Construimos puentes,

Entrelazamos arcadas,

Aramos la tierra,

Llevamos cosechas,

Dando a todos ideas, enseñanzas, axiomas,

Protegiéndolos del frío espiritual.

Dejamos destellos de nuestros ojos,

Jirones de nuestra alma

Y pedazos de nuestros corazones...

This text is licensed under Creative Commons



Translations from Armenian into Spanish, 1991 to date

Sí, somos pocos, pero nos llaman HAY.

Sabemos penetrarnos al costado del enemigo

Y ser ayudante de nuestro amigo,

Devolviéndole por multiplicado

Su bondad, que nos haya prestado.

Sabemos votar hasta con nuestra vida

Por el sol y por la verdad...

Pero si pretenden quemarnos vivos,

Con la cólera las llamas apagaremos

Y si es preciso, las tinieblas disiparemos.

Sabemos consumirnos como ardiente cirio...

Y sabemos también amarnos con pasión,

Respetando siempre a los demás...

A nadie superiores nos sentimos,

Mas sabemos quienes somos,

Nos dicen armenios.

¿Y por qué no nos enorgullezcamos?

¡Aquí estamos, aquí estaremos

Y aún nos multiplicaremos!

Paruyr Sevak (թարգմանությունը՝ Արարատ Ղուկասյանի)

Սոցիալական ցանցերից մեկում հայտնաբերեցի «Էրեբունի-Երևան» երգի թարգմանությունը: Ահա այն՝ անձամբ կատարած որոշ շտկումներով.

Convertido en Ereván, tú, mi Erebuni

Tú nuestro nuevo Dvin y nuevo Ani

Un Gran Sueño de nuestra pequeña Tierra

This text is licensed under Creative Commons



Translations from Armenian into Spanish, 1991 to date

Nuestra nostalgia milenaria y belleza pétrea.

Convertido en Ereván, tú, mi Erebuni

Siglos pasaste, pero joven quedaste

Con tu Ararat-padre, y Arax-madre

Que crezcas por los siglos, Ereván.

Llamadas de sangre en el corazón tenemos

Deseos incumplidos muchos tenemos

Nuestra llamada sin ti se perderá en vano

Sin ti se enfriará nuestro ardiente deseo.

Cada amor es diferente en esta vida

Y nosotros nos embriagamos contigo.

Nuestro amor está caliente, como tus piedras rubias

Y es tan vieja, como tus siglos sólidos.

2001 թվականին ձեռքս ընկավ «Ես իմ անուշ Հայաստանի...» մի սքանչելի թարգմանություն, որի հեղինակի անունն այդպես էլ չկարողացա իմանալ: Այն թարգմանել է Բրյուսովի անվան համալսարանի դասախոսներից մեկը, և ինձ էր հասել նրա ուսանողուհիներից մեկի միջոցով: Ահա այդ աշխատությունը.

Amo el verbo soleado de mi dulce Armenia,
Amo el matiz plañidero y lloroso de nuestra antigua viola,

Y el embriagador perfume de esas rosas nuestras, flores color de sangre,

Amo la danza cadenciosa y lasciva de las hijas de Nairi.

Amo nuestro cielo azul, nuestras claras aguas y nuestro lago encendido,

El sol del verano y los impetuosos vientos del invierno

Nuestras cabañas de ennegrecidos muros, perdidos en las tinieblas

Y las piedras milenarias de nuestras ciudades históricas...

Esté, donde esté, no olvidaré nunca nuestros cantos elegíacos

Ni nuestros libros góticos, que las plegarias han bendecido.

This text is licensed under Creative Commons



Translations from Armenian into Spanish, 1991 to date

Y aunque dolorosas y profundas heridas abran mi corazón,

No olvidaré a mi Armenia - huérfana, desgarrada.

Para mi corazón ardiente no existe más grandes testigos,

Ni genios tan grandiosos, como Narek y Kuchak...

Para mí en el mundo entero no existe una cima más blanca, que la del Ararat.

Yo amo el camino de Masís, camino de gloria eterna.

Հայ բանաստեղծության իսպաներեն թարգմանված հիանալի օրինակ է նաև Ասյա Եղիազարյանի «Մտորումներ» բանաստեղծությունների ժողովածուն, որը թարգմանվել և տպագրվել է Հայաստանում, թեև ժողովածուի շատ ստեղծագործություններ գրվել են Իսպանիայում: Գիրքը երկլեզու է, և ընթերցողը կարող է ուղիղ համեմատություն կատարել ստեղծագործությունների վերաբերյալ: Ահավասիկ մեկ բանաստեղծություն գրքից:

ՏՆՈՒՐ ՀՈՒՇ

RECUERDO TRISTE

Ես արթնացա մի ուշ գիշեր.

Me desperté una noche tardía

Լուսամուտիս շղարշ կապած՝

Con una neblina en la ventana.

Չյուն էր իչնում մեղմ ու հանդարտ,

Nevaba suave y serenamente

Փաթիլները իրար գրկած:

Con copos abrazados de nieve.

Դուրս նայեցի՝ աղմուկներից,

Miré afuera por los ruidos,

Քրքիջներից մանուկների,

Por las carcajadas de los niños.

Ձնագնդով իրար զարկում,

Se tiran bolas de nieve,

Թավալվում են, իսաղում նորից:

Dan volteretas, juegan de nuevo.

Արցունքներս սահեց հանկարծ,

Իմ հուշերի լուռ կարոտից...

De golpe rodaron lágrimas

Մենք սիրեցինք նման մի օր,

De la añoranza silenciosa de mis recuerdos.


Այս ձմեռվա ուշ գիշերին...

Nos amamos un día parecido,

En una noche tardía de aquel invierno.

This text is licensed under Creative Commons





Հայ արձակ ստեղծագործության թարգմանության ոլորտում հիանալի աշխատանք է կատարել մեր հայրենակից **Անի Խաչատրյանը**, ով թարգմանել է հայ դասականներ **Նար-Դոսի**, **Ավետիք Իսահակյանի**, **Հովհաննես Թումանյանի** և **Դերենիկ Դեմիրճյանի** ստեղծագործությունները: «Հայ գրականության տեսություն» («*Antología de la literatura armenia*») վերնագիրը կրող ընդհանուր աշխատությունը սկսվում է Հայ ժողովրդի պատմության և գրականության կարևորագույն դեպքերի ու դեմքերի ակնարկով, որին հաջորդում են գրողների ստեղծագործությունները.

Նար-Դոս «Ես և նա» - Nar-Dos “Yo y él”

Ավետիք Իսահակյան «Փողի համը» - Avetik Isahakyan “El sabor del dinero”

Ավետիք Իսահակյան «Այդ ոչինչը ես եմ» - Avetik Isahakyan “Ese nada soy yo”

Հովհաննես Թումանյան «Գիքորը» - Hovhannes Tumanyan “Guiqor”

Դերենիկ Դեմիրճյան «Ավելորդը» - Derenik Demirchyan “La persona que sobra”

Ստեղծագործություններին հաջորդում են հեղինակների հակիրճ կենսագրականները:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի պատմությանը, ապա ժամանակն է, որպեսզի հայ պատմաբաններն ավելի համարձակ գործեն և կոտրեն այն կարծրատիպը, որը պարտադրվում էր մեզ խորհրդային տարիներին, երբ դասագրքերում **Ուրարտուն** ոչ միայն հայկական պետություն չէր համարվում, այլև այն «խորհրդային հնագույն պետություն էր»: Երբ լռեցվում էին հայ մտավորականների ցանկացած միտում՝ ցեղասպանության հարցի վերաբերյալ: Երբ դյուցազներգությամբ, փիլիսոփայությամբ ու պատմագրությամբ լեցուն մեր գրականությունը ո՛չ միայն չէր թույլատրվում թարգմանել այլ լեզուներով, այլև ոչնչացվում, արգելվում կամ յուրացվում էր: Այդ իսկ պատճառով, աշխարհը (այդ թվում նաև՝ ուսումնասանչ հայերը) ճանաչեց Հերոդոտ, Արիստոտել, Պլատոն, Նիցշե ու Շեքսպիր, իսկ Ագաթանգեղոսը, Բյուզանդը, Մաշտոցը, Խորենացին, Անհաղթը, Կողբացին, Շիրակացին, Սահյանն ու Թումանյանը մնացին անճանաչ:

Իմ կարծիքով, ժամանակն է արդեն համարձակորեն նշել, որ Հայաստանը ոչ թե քաղաքակրթության օրրաններից մեկն է եղել (միայն 6000 տարվա պատմությամբ), այլև հենց նույն այս մարդկային քաղաքակրթության առաջին օրրանն է (եթե աշխարհի ամենահին կոշիկը, շրջագգեստն ու գինու պահեստներն արդեն իսկ 6000 տարեկան են, ապա ևս քանի՞ տարի էր հարկավոր տեղաբնակներին նման արվեստի նմուշներ մեզ նվիրելու համար): Մնում է միայն նորացնել մեր պատմագրությունը, որպեսզի թարգմանիչներն էլ մեր պատմությանը վերաբերող ճիշտ փաս-

տեր հրամցնեն համաշխարհային պատմագիտությանը: Խոսքս մասնավորապես ուղղված է նաև Անի Խաչատրյանին, ով, պարզ է՝ պատմության մասնագետ չէ և թարգմանել է այն, ինչ գոյություն ունի:

Դե իսկ ինչ վերաբերում է հայ գրողների արձակ ստեղծագործությունների թարգմանությանը, ապա Ա. Խաչատրյանի աշխատանքն աննախադեպ է Իսպանիայում, որը հնարավորություն տվեց գործին մասնակից դարձնել իսպանացիների, ում անչափ հետաքրքրում է մեր մշակույթը:

Մինչ Անի Խաչատրյանի գրքի շնորհանդեսը, Միլատայի Մշակույթի Կենտրոնում ներկայացվել էր նույն Carena հրատարակչատանը տպագրված **Մարկ Մորտեի «Արարատի զավակները» («Los hijos del Ararat»)** գիրքը, որն Իսպանիայում տպագրված **Հայոց Ցեղասպանության** վերաբերյալ առաջին վեպն է: Հենց նույն բարեկամների շնորհիվ է հնարավոր դառնում իրագործել այն բոլոր գաղափարները, որոնք նպաստում են հայ գրականության ներկայացմանը օտար երկրում: Մարկ Մորտեի հետ ծանոթությունն, իր հերթին, հնարավոր դարձավ նույն հրատարակչատան խմբագիր, գրող **Խոսե Մեմբրիվեի** միջոցով:

Անի Խաչատրյանը ծնվել է 1986 թ. **Գյումրիում**: Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցին զուգահեռ հաճախել է երաժշտական դպրոց, ուսանել դաշնամուր և սոլֆեջո:

14 տարեկանից բնակվում է **Բարսելոնայում**: Այժմ ուսանում է Բարսելոնայի **Համալսարանի Իրավաբանական** ֆակուլտետում, միաժամանակ աշխատում է **օտարերկրացիների հարցերով գրասենյակում**:

Անի Խաչատրյանը **«Հայաստանի բարեկամներ»** միության անդամ է և համագործակցում է **«Արարատ» Միության** հետ: Նրա աշխատությունը լավագույն միջոց է հայ գրականությանը, հայկական իրականությանն ու ավանդույթներին ծանոթանալու համար:



Հայոց պատմության իսպաներեն թարգմանված ամենացայտուն օրինակը **Աշոտ Արծրունու «Հայ ժողովրդի պատմություն»** աշխատությունն է՝ թարգմանությամբ **Ռուբեն Արծրունու**: “HISTORIA DEL PUEBLO ARMENIO”-ն իսպաներենով երբևէ հրատարակված ամենաընդհանրական գիրքն է հայերի հարուստ և բազմադարյա պատմության վերաբերյալ: Ուրախությամբ պետք է նշել, որ այս գրքում արդեն նկատելի են այն համարձակ կարծիքները, որոնց մասին վերոհիշյալ հիշատակվել էր և որոնք պարզապես անհրաժեշտություն են պատմությունը ճիշտ ներկայացնելու, իրադարձություններն իրենց անուններով կոչելու և, ըստ այդմ, հասարակությանը իրազեկ պահելու այն խնդիրների մասին, որոնք առկա են պատմագիտության մեջ:


Այս արդիականացված աշխատությունն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումից մինչև **Ցյուրիխում** 2009 թվականին ստորագրված հայ-թուրքական արձանագրություններն ընկած, համաշխարհային պատմության մեջ կարևոր ու բեկումնային իրադարձություններով լի մի ժամանակաշրջան, որում առանցքային տեղ է գրավում նաև ներկա միջազգային իրադրությունը:

Գրքի հեղինակ Աշոտ Արծրունին (**Արծրունի Դուլյան**) ծնվել է 1902 թվականին **Քանաքեռում**: Սովորել է **ԵՊՀ-ի Պատմության** ֆակուլտետում: 15 տարեկանում ընտրվել է **Հայաստանի Ուսանողների միության**, իսկ մեկ տարի անց՝ **Անդրկովկասի Ուսանողների Ֆեդերացիայի** նախագահ: Եղել է XX դարի հայ մտավորականության առաջին սերնդի ցայտուն ներկայացուցիչներից մեկը:

1917 թ. ընդգրկվել է ՀՅԴ շարքերը, մասնակցել **Բաշ-Ապարանի** ճակատամարտին: 1921 թ. խորհրդային իշխանության դեմ ապստամբության համար, հոր՝ Քանաքեռի գյուղապետ Գևորգ Դուլյանի հետ երկու տարի բանտարկվել է: 1924 թ. մեկնում է **Փարիզ** և հաստատվում այնտեղ **Արտաշես Սիրույան** կեղծանվամբ: Ֆրանսիայում գտնվելու տարիներին ակտիվորեն մասնակցում է **Հայկական Հարցի** լուսաբանման աշխատանքներին, տպագրվում **Փարիզի «Ցառաջ»** և **Բոստոնի «Հայրենիք»** թերթերում: Այնուհետև հաստատվում է **Բուենոս Այրեսում**, որտեղ ղեկավարում է **«Արմենիա»** օրաթերթը և հիմնում Հարավային Ամերիկայի հայկա-կան համայնքների լրագիր:

1965 թ., 20-ամյա երկարատև ուսումնասիրություններից հետո, հրատարակում է «Հայ ժողովրդի պատմություն» աշխատությունը:

Մահացել է 1979 թվականին Բուենոս Այրեսում:



2010 թ., **Սեդա Ղազարյանի** հեղինակությամբ, լույս տեսավ Իսպանիայում առաջին **հայերեն-իսպաներեն բառարանը**, որը պարունակում է **70.000 բառ**: Այս հաստատվոր բառարանի կազմմանը հեղինակի հետ մասնակցել են նաև նրա ընտանիքի անդամները՝ ամուսինը՝ **Հակոբ Բեբեքյանը** և երկու զավակները՝ **Կարեն և Քրիստինե Բեբեքյանները**:

Սեդա Ղազարյանը ծնվել է 1955 թ. Երևանում: Նախնական կրթությունն ստացել է տեղի թիվ 65 միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է **Խաչատուր Աբովյանի** անվան **Մանկավարժական համալսարանի Մշակույթի ֆակուլտետի Մատենագիտության և Գրադարանավարության** բաժնում: Ուսումն ավարտելուց հետո աշխատել է Հայաստանի տարբեր դպրոցներում, որպես ուսուցչուհի և գրադարանավարուհի:

2000 թ. ի վեր Բեբեքյան-Ղազարյանների ընտանիքը հաստատվում է Իսպանիայի Վալենսիա քաղաքում: 2007 թվականից Սեդա Ղազարյանը «Արարատ» Հայկական



Միության անդամ է և Մայրենի լեզու է դասավանդում միության ստեղծած և նրա հովանավորության տակ գտնվող Կիրակնօրյա Հայկական դպրոցում:

Սեդա Ղազարյանի աննախադեպ աշխատությունը խթան կարող է հանդիսանալ հայերենից իսպաներեն թարգմանական գործունեության ոլորտում:

Հայկական իրականությանն ու ավանդույթներին վերաբերող աշխատություններ են թարգմանվել նաև այլ լեզուներից: Այդ աշխատությունները մեծամասամբ ազգությամբ հայ հեղինակների գրչին են պատկանում: Նմանատիպ հիանալի թարգմանություն է **Անրի Վերնոյի «Մայրիկ»** ստեղծագործությունը, որը ֆրանսերենից իսպաներեն է թարգմանել **Նելլի Բելուզին**: Գիրքը տպագրվել է 1987թ.:

2003 թ., **Նորա Գուտմանի** գերմաներենից իսպաներեն թարգմանությամբ, լույս է տեսնում **Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը»** վեպը: Իսկ ահա 2005 թ. **Անա Իսաբել Կոնեխոն** ֆրանսերենից թարգմանում է **Ռենե Սյուլաշջյանի «Հայաստանի հեքիաթներն ու առասպելները»** ժողովածուն, որը կարծես թե հայկական մշակույթի այլընտրանքային մի դրսևորում էր, ցեղասպանության թեման շրջանցող կարևորագույն փաստաթուղթ:

Հայկականությամբ լեցուն են **Վիլյամ Սարոյանի** ստեղծագործությունները **«Մարդկային կատակերգություն»** (2004 թ., թարգմանիչ՝ **Խավիեր Կալվո**), **«Իմ անունն է Արամ»** (2005 թ., թարգմանիչ՝ **Ջորդի Մարտին Յորետ**), **«Ուեսլի Ջեքսոնի արկածները»** (2006 թ., թարգմանիչ՝ **Ջորդի Մարտին Յորետ**):

Վերոհիշյալ թարգմանություններից բացի, Իսպանիայում հրատարակվել են նաև գրքեր, որոնց բովանդակությունը խոսում է Հայաստանի, հայ ժողովրդի և հայկական իրականության մասին: Բնական է, որ իսպանացի հեղինակների աշխատություններն այս կամ այն չափով պայմանավորված են հայերի և Հայաստանի հետ շփումներով, որոնք առանցքային դեր են խաղացել այդ ստեղծագործությունների լույս աշխարհ գալու ճանապարհին: Այս հարաբերություններն ինչ-որ չափով նաև թարգմանական դեր են խաղում, քանզի հայ-իսպանական մշակութային, սոցիալական և քաղաքական հարաբերությունները հնարավոր են միայն «թարգմանիչների» ու միջնորդների միջոցով:

Այսպես ահա, **Մարկ Մորտեն «Արարատի զավակները»** վեպը գրելու համար, ճանապարհորդել է Հայաստան, երկար ժամանակ բնակվել Ստամբուլում, մեկնել ԱՄՆ՝ ցեղասպանություն վերապրած հայուհու հետ հանդիպելու համար: Բարսելոնայում հեղինակը սերտ հարաբերությունների մեջ է հայերի և, մասնավորապես, թարգմանչուհի **Անի Խաչատրյանի** հետ: «Արարատի զավակները» գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Միլալտայի Մշակույթի կենտրոնում՝ «Արարատ» Հայկական միության նախաձեռնությամբ:

Իսպանական շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրեց Խոսե **Անտոնիո Գուդիարանի «Հայեր. մոռացված ցեղասպանություն»** (2009) աշխատությունը, որը ծնունդ առավ իր իսկ հեղինակությամբ լույս տեսած **«Ռումբը»** (1982) գրքի հիման



վրա: Հիշեցնենք, որ Գուռիարանը վիրավորվել էր «Ասալայի» կողմից Մադրիդում տեղակայված ռումբից, որն էլ առիթ է հանդիսացել վերոհիշյալ ստեղծագործության հրատարակմանը: Գուռիարանն իր ստեղծագործության մեջ խստորեն դատապարտում է մերժողականության քաղաքականությունը և հորդո-րում իսպանական կառավարությանը ճանաչել Հայոց Ցեղասպանությունը: Գիրքն արդեն թարգմանվել է ռուսերեն:

Նմանատիպ ստեղծագործություն է **Գոնսալո Հերնանդես Գուարչի «Հայկական տոհմաձագ»** (2002) գիրքը, որը վերջերս թարգմանվել է հայերեն:

Ցավոք պետք է նշել, որ իսպանական շրջանակներում հնարավոր է, որ ձևավոր-վի այն կարծիքը, որ ցեղասպանությունը մշակույթ ստեղծելու թեմա է հանդիսա-նում մեր՝ հայերիս մոտ: Այս վտանգավոր տեսակետը կարող է հանգեցնել նրան, որ իսպանացի մտավորականները հայկական իրականությունը պատկերող ցան-կացած արվեստի գործ «համեմեն» ցեղասպանության երանգով: Ավելի հակիրճ ձևավորելով միտքս՝ կստացվի այնպես, որ հայ ասելով՝ իսպանացին անմիջապես կմտաբերի ցեղասպանության փաստը:

Մյուս կողմից, իսպանական դասագրքերում և գրեթե ոչ մի հանրագիտարանում չի հիշատակվում Հայոց Ցեղասպանության մասին: Նաև պետք է նշել, որ **Սապա-տերոյի** նախորդ թուրքամետ իշխանությունը, որը «Քաղաքակրթությունների Դաշինք» էր ստեղծել հենց Թուրքիայի անմիջական առաջնորդությամբ, արդեն մերժել էր Հայոց Ցեղասպանությունը ճանաչելու բանաձևի ընդունումը:

Իսպանական դասագրքերը չեն հիշատակում նաև Հայաստանի առաջին **Քրիստոնեական** երկիր լինելու փաստը: Այս և նման այլ հակասությունները վկա-յում են թույլ տեղեկատվական դաշտի, որոշ դեպքում նաև՝ ապատեղեկատվության մասին: Իսկ թույլ տեղեկատվական դաշտը պայմանավորված է թարգմանական ասպարեզի (այս դեպքում՝ հայերենից իսպաներեն) ցածր մակարդակով: Որպեսզի հայկական բազմադարյա ու հարուստ մշակույթը հավուր պատշաճի ներկայանա իսպանական շրջանակներում, առաջին հերթին անհրաժեշտ է թարգմանել մեր գրականության հնագույն, միջնադարի և ոսկեդարի գրական ահռելի ժառանգու-թյունը:




Հայաստանը բացահայտելու հանճարեղ փորձ է կատարել գրող, լրագրող **Խոսե Մարիա Կալը**, ով հեղինակել է «**Հայաստան. հպարտություն և կիրք**» զբոսաշրջության ձեռնարկը: Այս ընդհան-րացնող աննախադեպ աշխատանքն իր էջերում ընդգրկում է ոչ միայն Հայաստանի, այլ նաև՝ **Արցախի** պատմությունը, տեսարժան վայրերը, պատմամշակութային հուշարձանները, հասարակական վայրերը, խոհանոցը, մի խոսքով այն ամենը, ինչ ասել է Հայաստան և հայ ժողովուրդը: Հարկ է նշել, որ մինչ օրս Իսպանիայի գրադարաններում և գրախանութներում կարելի էր գտնել գրեթե բոլոր երկրների զբոսաշրջության ձեռնարկներ, բացի Հայաստանի: Ահա այս բացը լրացրեց Խոսե Մարիա Կալը: Իսկ դրանում նրան օգնել են «թարգմանիչները»՝ նրա հայ ընկերները



և առաջին հերթին՝ հայուհի կինը: հեղինակն անձամբ մի քանի անգամ եղել է Հայաստանում, հավա-քագրել անհրաժեշտ փաստաթղթեր, եղել երկրի գրեթե ամեն մի անկյունում, լու-սանկարել անհրաժեշտ տեսարաններն ու հուշարձանները, ծանոթացել հայկական խոհանոցին ու հայ մարդու կենցաղին: Գիրքը տպագրվել է 2011 թ.: «Արարատ» միության նախաձեռնությամբ գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել սույն թվականի մայիսին՝ **Հայ Գրատպության 500-ամյակի** առիթով (թեև գիրքը հայատառ չէ, բայց նրա էջերում ամեն ինչ շնչում է հայերենով):

IV. ՄԻՋՆՈՐԴ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Եթե հաշվի չառնենք հայազգի հեղինակների (Անրի Վերնոյ, Վիլյամ Սարոյան) ստեղծագործությունների միջնորդ լեզվից իսպա-ներեն թարգմանությունները, ապա հայերենից միջնորդ լեզվով իսպաներեն թարգմանված միակ աշխատությունը **Ռենե Սյուլաշջյանի «Հայաստանի հեքիաթներն ու առասպելները» (Reine Cioulachtjian “Cuentos y leyendas de Arenia” – Anaya – 2005)** ժողովածուն է: Այն ֆրանսերենից իսպաներեն է թարգմանել կենսաբան, բանաստեղծուհի, թարգմանչուհի, բազմաթիվ ստեղծագործությունների և թարգմանությունների հեղինակ **Անա Իսաբել Կոնեխոն**:



Անա Իսաբել Կոնեխոն ծնվել է 1970 թ. **Տառասայում** (Բարսելոնա): Ուսանել է **Լեոնի համալսարանի Կենսաբանական ֆակուլտետում**: Այնուհետև ուսումը շարունակել է **Շոտլանդիայում** և **Ֆրանսիայում**:

V. ՀԱՅԵՐԵՆԻՑ ԻՍՊԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ



Մանուել Դոմինգես Մերինո – թարգմանել է Արա Միմոնյանի «Հուսո կանթեղ» (**“Lucerna de esperanza”**) բանաստեղծությունների ժողովածուն: Ծնվել է 1924 թ. հուլիսի 21-ին Նոգալեսում (Բադախոս), մահացել՝ 2008 թ. ապրիլի 14-ին Մերիդայում (Բադախոս), 83 տարեկան հասակում: Հինգ զավակների հայրը եղել է գրող, բանաստեղծ, թարգմանիչ, երգահան, սիրիժոր, բազմաթիվ հնագույն գրությունների վերականգնող: Նա վերականգնել է Սանտա Էուլալիայի օրհներգը, որը ներկայացվել է 2004 թ., ինչպես նաև բազմաթիվ շարականներ: Պարգևատրվել է Մերիդա քաղաքի Ոսկե շքանշանով: Նրա անունով է կոչվում իր ծննդավայր Նոգալեսի Մշակույթի Տունը:

Մանուել Դոմինգես Մերինոն եղել է Մերիդայի գրողների Միության անդամ, որտեղ էլ ճանաչել է մեր հայրենակից Արա Միմոնյանին: Հենց այդ ծանոթությունն էլ առիթ է հանդիսացել վերջինիս գրքի թարգմանմանը: Թարգմանությունը կատարվել է բարեգործական հիմունքներով: Շնորհան-դեսներից ստացված ողջ հասույթը տրամադրվել է գրքի հեղինակին:



Անա Կաստիյո Մորենո – թարգմանել է Արա Միմոնյանի «Հուսուկանթեղ» (**“Lucerna de esperanza”**) բանաստեղծությունների ժողովածուն: Բազմաթիվ մրցանակների դափնեկիր է. *Oliva de la Frontera de Poesía* (1996), Մեծահասակների Միության XI մրցույթի I մրցանակակիր (1996), “José de Espronceda” բանաստեղծության VI մրցույթի II մրցանակակիր (1998), “Cilanco” բանաստեղծական մրցույթի I մրցանակակիր (1999), “Emilio Murcia” գրական մրցույթի III մրցանակակիր (1999):

“Gallos Queiebran Albores” և “Prometeo” միությունների անդամ է: Ներկայումս բնակվում և ստեղծագործում է Մերիդայում: Աշխատում է տեղի միջնակարգ դպրոցում, որպես Լեզվի ուսուցչուհի:



Անի Խաչատրյան – գրել է «**Հայ գրականության տեսություն**» (**«Antología de la literatura armenia»**) աշխատությունը, որում տեղ են գտել հայ դասականներ Նար-Դոսի, Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Թումանյանի և Դերենիկ Դեմիրճյանի իսպաներեն թարգմանությունները:

Աշխատությունը սկսվում է հայ ժողովրդի պատմության ակնարկով, իսկ վերջում տեղ են գտել հայ հեղինակների հակիրճ կենսագրականները:

Անի Խաչատրյանը ծնվել է 1986 թ. **Գյումրիում**: Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցին զուգահեռ հաճախել է երաժշտական դպրոց, ուսանել դաշնամուր և սոլֆեջո:

14 տարեկանից բնակվում է **Բարսելոնայում**: Այժմ ուսանում է Բարսելոնայի **Համալսարանի Իրավաբանական ֆակուլտետում**, միաժամանակ աշխատում է **օտարերկրացիների հարցերով գրասենյակում**:

Անի Խաչատրյանը «**Հայաստանի բարեկամներ**» միության անդամ է և համագործակցում է «**Արարատ**» Միության հետ: Նրա աշխատությունը լավագույն միջոց է հայ գրականությանը, հայկական իրականությանն ու ավանդույթներին ծանոթանալու համար:

Թարգմանությունը կատարվել է բարեգործական հիմունքներով: Իսկ տպագրության բոլոր ծախսերը հոգալու համար, իրականացվել են մի քանի շնորհանդեսներ Վալենսիայում և Բարսելոնայում:





Ռուբեն Արծրունի «Հայ ժողովրդի պատմություն» («HISTORIA DEL PUEBLO ARMENIO») - թերևս իսպաներեն գրված ամենարնդհանրական աշխատությունը, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ նրա ծագումից մինչև 2009 թ.:

Ռուբեն Արծրունին (Ռուբեն Միրոյան) գրքի հեղինակ Աշոտ Արծրունու որդին է: Ծնվել է 1931 թ. Փարիզում: 1938 թ. ի վեր բնակվում է Բուենոս Այրեսում: Շուրջ չորս տասնամյակ աշխատել է բանկային համակարգի միջազգային առևտրի մասնաբաժնում: 1947 թ. սկսում է զբաղվել քաղաքականությամբ՝ ընդ-գրկվելով **Հայ Երիտասարդների Միության** շարքերը: 1956 թ.-ից **ՀՅԴ** անդամ է:

Լրագրողական աշխատանքն սկսել է 1950-ականներին: Եղել է **«Կամֆ»** ամսագրի և **«Երիտասարդության ձայնը»** ռադիոալիքի տնօրեն: 1970 թ. եղել է **«Արմենիա»** թերթի իսպաներեն բաժնի խմբագիր, իսկ 1993-2005 թթ.՝ տնօրեն:

Իսպաներեն է թարգմանել մեծ թվով հոդվածներ ու աշխատություններ ֆրանսերենից, հայերենից, անգլերենից, իտալերենից և պորտուգալերենից: Ներկայումս բնակվում է Բուենոս Այրեսում և հաճախ տպագրվում մամուլում:

Պետք է նշել, որ իսպանախոս երկրներում անսահման անհրաժեշտություն էր նմանատիպ աշխատությունը: Այդ իսկ պատճառով այն մեծ ոգևորություն և հետաքրքրություն առաջացրեց այդ երկրների հայ ազգաբնակչության և իսպանացի ընթերցողների շրջանում: Վստահաբար կարելի է ասել, որ իսպանական գրադարանները լրացրեցին այն բացը, որ ունեին հայոց պատմության վերաբերյալ: Տեղի են ունեցել բազմաթիվ շնորհանդեսներ Իսպանիայի տարբեր քաղաքներում, Արգենտինայում և Ուրուգվայում: Գիրքը հրատարակվել է **SIRAR** հրատարակչատանը:



Սեդա Ղազարյան, «Հայերեն-իսպաներեն բառարան» («Diccionario armenio-español»): Այս աշխատությունն Իսպանիայում հրատարակված առաջին հայերեն-իսպաներեն բառարանն է, որը տպագրվել է **Artes Gráficas Soler sl** հրատարակչատանը և պարունակում է **70.000 բառ**: Բառարանի կազմմանն անկրկնելի օգնություն է ցուցաբերել հեղինակի ընտանիքը, ամուսինը՝ **Հակոբ Բերեքյանը**, և երկու զավակները՝ **Կարեն և Քրիստինե Բերեքյանները**:

Սեդա Ղազարյանը ծնվել է 1955 թ. Երևանում: Նախնական կրթությունն ստացել է տեղի թիվ 65 միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է **Խաչատուր Աբովյանի** անվան **Մանկավարժական համալսարանի Մշակույթի ֆակուլտետի Մատենագիտության և Գրադարանավարության** բաժնում: Ուսումն ավարտելուց հետո աշխատել է Հայաստանի տարբեր դպրոցներում, որպես ուսուցչուհի և գրադարանավարուհի:



2000 թ. ի վեր Բեբեքյան-Ղազարյանների ընտանիքը հաստատվում է Իսպանիայի Վալենսիա քաղաքում: 2007 թվականից Սեդա Ղազարյանը «Արարատ» Հայկական Միության անդամ է և Մայրենի լեզու է դասավանդում միության ստեղծած և նրա հովանավորության տակ գտնվող **Կիրակնօրյա Հայկական դպրոցում**:

Տեղի են ունեցել բազմաթիվ շնորհանդեսներ, որոնցից ստացված շահույթն էլ հենց հանդիսանում է հեղինակի, իր աշխատանքի դիմաց ստացված եկամտի աղբյուրը: Սեդա Ղազարյանի աննախադեպ աշխատությունը խթան կարող է հանդիսանալ հայերենից իսպաներեն թարգմանական գործունեության ոլորտում:

VI. ՄԻՋՆՈՐԴՆԵՐ

Հայերենից իսպաներեն թարգմանական գործում, անշուշտ, մեծ դեր են կատարում միջնորդները: Շատ դեպքերում հենց իրենք, միջնորդները, հանդես են գալիս որպես թարգմանիչներ:

Արա Սիմոնյանի «Հուսո կանթեղ» բանաստեղծությունների ժողովածուի թարգմանության գործում միջնորդներ են հանդես եկել հենց թարգմանիչները՝ Մանուել Դոմինգես Մերինոն և Անա Կաստիյո Մորենոն, ովքեր հայազգի բանաստեղծին առաջարկել էին մասնակցել Էքստրեմադուրայի Գրողների Գրական Ստեղծագործությունների մրցույթին: Մասնակցելով մրցույթին՝ հեղինակը դրամական պարգևի փոխարեն նախընտրում է գրքի տպագրումը, որն էլ հենց հիմք է հանդիսանում «Lucerna de esperanza» ժողովածուի լույս աշխարհ գալուն: Գիրքը լույս է տեսել 2003 թ., և մինչև 2010 թ. անճանաչ էր իսպանահայությանը, քանզի Էքստրեմադուրայում հայերի թիվը շատ քիչ է, իսկ այլ համայնքներում, ինչպես ասենք Վալենսիայում, հայ բանաստեղծի Իսպանիայում բնակության մասին հայտնի դարձավ 2008 թ.՝ շնորհիվ համայնքում տպագրվող Իսպանիայի առաջին և ցայսօր միակ հայատառ թերթի՝ «Հայրենիք» շաբաթաթերթի, որի «Հայերն Իսպանիայում» և «Գրական էջ» մասնաբաժիններում հաճախակի տպագրվում է մեր հայրենակցի գրական գործունեության մասին: «Հուսո կանթեղ» գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել Մերիդայում և Միսլատայում, որոնց մասին կարող եք կարդալ հետևյալ կայքէջերում.

http://ararat.ucoz.es/publ/mislatayi_qaghaqayin_gradarany'_lracav_ews_mek_grgov/1-1-0-45

www.hayernaysor.am

Արա Սիմոնյանի բանաստեղծությունների ժողովածուն արդեն իր ուրույն տեղն է գրավում Վալենսիայի գրադարաններում:

Անի Խաչատրյանի «Հայ գրականության տեսություն» աշխատության լույս տեսնելու դեպքում մեծ դեր են խաղացել իսպանացի գրողներ Խոսե Մեմբրիվեն և Մարկ Մորտեն, որոնց գրքերը նույնպես տպագրվել են նույն հրատարակչատանը՝ Ediciones Carena: Գրքի առաջին ցուցահանդեսը տեղի է ունեցել 2010 թ. մայիսի 27-ին Միսլատայի Մշակույթի կենտրոնում՝ «Արարատ» Հայկական միության նախա-



ձեռնությամբ, այնուհետև Բարսելոնայում՝ տեղի հայ համայնքի նախաձեռնությամբ: Միջոցառումների մասին կարող եք տեղեկանալ ներքոհիշյալ կայքէջերում:

http://ararat.ucoz.es/publ/hay_grakanowt'yan_tesowt'yown_ani_xachatryan/1-1-0-44

<http://www.youtube.com/watch?v=qTX5ZOBUVF0>

http://www.facebook.com/note.php?note_id=127798580631129

Անի Խաչատրյանի աշխատության շնորհիվ Իսպանիայի գրադարանները հարըտացան ևս մեկ հայկականությունը բնորոշող գրքով: Հեղինակը նաև հանդես է գալիս հողվածներով «Հայրենիք» շաբաթաթերթում:



Խոսե Մեմբրիվե և Մարկ Մորտե

Ռուբեն Արծրունին թարգմանել և արդիականացրել է հոր՝ Աշոտ Արծրունու «Հայ ժողովրդի պատմություն» («Historia del Pueblo Armenio») աննախադեպ աշխատությունը, որն առաջին անգամ հրատարակվել է 1965 թ. Բուենոս Այրեսում՝ Հայոց Ցեղասպանության 50-ամյակի առթիվ: Գիրքը վերահրատարակվել է 1971 և 1978 թթ.: Գրքի արդիականացումը վերջին ժամանակների կարևորագույն նախաձեռնություններից մեկն է, քանզի այն ընդգրկում է 1985 թ. Պերեստրոյկայից (ես ինքս այդ ժամանակաշրջանն անվանում եմ «Պերեստրելկա») ընդհուպ մինչև 2009 թ. Յյուրիխյան հայ-թուրքական հայտնի և «անհայտ» արձանագրությունները: Գիրքն ինքնին մեծ հետաքրքրություն է առաջացնում այն առումով, որ բացի հայ ժողովրդին վերաբերող կարևորագույն անցքերից, ներառում է նաև միջազգային իրադարձություններ:

Ամեն անգամ, երբ ձեռք եմ առնում այս գիրքը, այնպիսի տպավորություն է ստեղծվում ինձ մոտ, որ այս գործի համար որպես միջնորդ հանդես է եկել ողջ հայ ժողովուրդը, որպեսզի 600 միլիոնանոց ընթերցարանի դատին հանձնվի աշխարհի ամենահնագույն քաղաքակրթություններից մեկի ճշգրիտ պատմությունը: Ինչպես արդեն վերը նշել էի, ես ինքս համարձակ տեսակետների կողմնակից եմ, տեսակետներ, որոնք ընթերցողներն ու մասնագետները կգտնեն այս գրքում:



Աշխատության նախաբանում հանդես են գալիս **Գևորգ Յագճյանն** ու **Խոսե Անտոնիո Գուռիարանը**: Գիրքը թարգմանիչը նվիրում է կնոջը՝ **Անահիտ Ջելատյանին**, նրա ասելով՝ «հայկական սփյուռքի չափանիշ հանդիսացող մի կնոջ», ով իր աշխատանքի ողջ ընթացքում եղել է նրա ոգևորողը:

Տեղի է ունեցել գրքի մի քանի շնորհանդեսներ, Բուենոս Այրեսում, Բարսելոնայում... Այժմ պատրաստվում է նոր շնորհանդես Վալենսիայում՝ «Արարատ» Հայկական միության նախաձեռնությամբ: Նշված միջոցառումների մասին կարող եք տեղեկանալ այս կայքէջերում.

<http://www.centroarmenio.com.ar/modules/aaa/article.php?storyid=45>

<http://www.sirarediciones.com/>

<http://www.facebook.com/pages/Historia-del-Pueblo-Armenio/121633437850606>

Մեղա Ղազարյանի հեղինակած հայերեն-իսպաներեն բառարանն առաջինն է իր տեսակի մեջ, որ տպագրվել է Իսպանիայում: Բառարանն ընդգրկում է 70.000 բառ: Այն լրացրեց հայ-իսպանական մշակութային ու կրթական հարաբերությունների մեջ գոյություն ունեցող ահռելի բացը, որը կարող է առիթ հանդիսանալ թարգմանական գործի խթանմանը:

Այս դեպքում ևս միջնորդի մեծագույն դեր է խաղացել իսպանահայությունը և իհարկե հեղինակի հարազատները՝ ամուսինը և երկու զավակները: Նշենք, որ վերջիններիս անունները ևս հիշատակվում է գրքում, որպես համահեղինակներ: Հայերեն-իսպաներեն բառարանի շնորհանդեսը տեղի ունեցավ Մանիսեսում և Միսլատայում: Շնորհանդեսին ներկա էին Վալենսիայի մարզպետարանի և Միսլատայի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք: Այս ամենի մասին կարելի է տեղեկանալ **Google**-ում՝ նշելով **Asociación Armenia Ararat de Mislata** տարբերակը:

http://mislatanews.com/index.php?Itemid=548&id=1649&option=com_content&task=view

VII. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, երբ խոսում ենք Իսպանիայում հայերենից իսպաներեն թարգմանված գրականության մասին, նկատի ունենք հետևյալ աշխատությունները.

- Արա Միմոնյան «Հուսո կանթեղ» - Ara Simonyan “Lucerna de esperanza”
- Անի Խաչատրյան «Հայ գրականության տեսություն» - Ani Khachatryan “Antología de la literatura armenia”
- Աշոտ Արծրունի «Հայ ժողովրդի պատմություն» - Ashot Artzruni “Historia del Pueblo Armenio”



- **Սեդա Ղազարյան «Հայերեն-իսպաներեն բառարան» - Seda Ghazaryan “Diccionario armenio-español”**

Աշխատությունների կարևոր լինելով հանդերձ՝ պետք է արձանագրել, որ հայերենից իսպաներեն թարգմանական գործը համարվում է անբավարար: Այս գնահատականը հիմնականում պայմանավորված է հետևյալ կարևորագույն փաստարկներով.

1. Քանակ
2. Տպագրության որակ
3. Ձևավորում
4. Ուղղագրություն
5. Ոճ

1. **Քանակ.**- Հաշվի առնելով այն գրական հարուստ ժառանգությունը, որը հայ ժողովուրդը կարող է հասանելի դարձնել համաշխարհային իսպանախոս հասարակությանն ու արվեստին, Սերվանտեսի հայրենիքում թարգմանված ու հրատարակված վերոհիշյալ չորս աշխատությունները խիստ անբավարար են: Այս ոլորտում առաջին հերթին պետք է հենվել տեղում բնակվող հայ մտավորականության վրա, որը քաջ գիտակցում է, թե որտե՛ղ է թերանում հայ գրականությունը իսպանական շրջանակներում պատշաճ ներկայացնելու գործը: Ըստ այդմ, հնարավոր կլինի ավելի շատ քանակով և որակով ստեղծագործություններ թարգմանել և ներկայացնել իսպանախոս մշակութային շրջանակներին և գրատպության շուկային:

2. **Տպագրության որակ.**- Որակով տպագրությունը գլխավորապես կախված է հրատարակչատնից: Այն կարևորագույն դեր է խաղում գրքերի իրացման գործում, որն էլ իր հերթին համապատասխան ճանաչում է ձեռք բերում ընթերցողների շրջանում: Այս առումով վերոհիշյալ գործերից լավագույնը Աշոտ Արծրունու հեղինակած և Ռուբեն Արծրունու թարգմանած «Հայ ժողովրդի պատմություն» աշխատությունն է:

3. **Ձևավորում.** – Գրքերի իրացման գործում մեծ նշանակություն ունի նաև ձևավորումը: Այս մասին խոսելիս, դարձյալ պետք է կանգ առնեմ «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության վրա, որը բացի ճաշակով ձևավորված կազմից՝ պարունակում է նաև բազմաթիվ գունավոր և որակով լուսանկարներ ու քարտեզներ: Գիրքն ունի կապիչներով գեղեցիկ տուփ, որը նրան թանգարանային նմուշի տեսք է հաղորդում:

Գեղեցիկ ձևավորում ունի նաև Արա Միմոնյանի «Հուսո կանթեղ» բանաստեղծությունների ժողովածուն, որն ընդգրկում է հետաքրքիր գծանկարներ՝ հեղինակությամբ Վիլեն Գաբազյանի:



4. **Ուղղագրություն.** – Բացառությամբ Աշոտ Արծրունու մեծածավալ աշխատության վերը հիշատակված գրքերը կարդալիս, նկատվում է թարգմանական երկարատև աշխատանքը և տպագրական շտապողականությունը: Ուղղագրական սխալները թվում են անխուսափելի գրատպության գործում, սակայն շտապողականությունը կրկնապատկում է սխալների քանակը, որում մեղքի իր բաժինն է կրում նաև հրատարակչատունը:
5. **ՈՃ.** – Երբ խոսում ենք հայերենից իսպաներեն թարգմանական գործի մասին, պետք է նկատի ունենալ մեկ կարևոր հանգամանք. հայերենն ավելի հարուստ և ճկուն լեզու է, քան իսպաներենը, որում անգամ շեշտը կարող է ամբողջովին փոխել բառի իմաստը: Քերականության առումով նույնպես տեքստերի ծավալը որոշակի փոփոխությունների է ենթարկվում, քանի որ խոնարհման և հոլովման ժամանակ, եթե հայերենում վերջավորություններն ու ածանցները մեծամասամբ գրվում է բառի հետ, ապա իսպաներենում դրանք գրվում են առանձին: Այդ իսկ պատճառով առավել դժվար է թարգմանել բանաստեղծությունը, քան արձակ ստեղծագործությունը: Առաջինի դեպքում գրեթե ամբողջովին կորում է հանգավորումը:

Նաև պետք է արձանագրել, որ հայոց լեզվի ճկունությունը թույլ է տալիս նոր բառեր «հորինել» միտքը և հանգավորումը հարմարացնելու համար: Իսկ ահա իսպաներենում սա գրեթե անհնար է:

Այսպիսով, հայերենից իսպաներեն թարգմանական գործի կոնտեքստում Իսպանիան համարվում է սկսնակ երկիր, որտեղ, հայ գրականության ծանուցմանը զարկ տալու համար, դեռ պետք է լուրջ աշխատանքներ տարվեն: Իսկ առաջին քայլը պետք է լինի հայ դասականների ստեղծագործությունների թարգմանությունը:

Երկիր մուլորակի վրա բնակվող մարդիկ խոսում են **6912 լեզվով**: Այս **Բաբելոնյան աշտարակում** իսպաներենը զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը: Սա մի փաստարկ է, որն առավելագույնս պետք է ոգևորի մեր գրողներին ու թարգմանիչներին, որպեսզի հայ գրական արվեստը հաստատուն քայլերով մուտք գործի իսպանական գրական շուկա: Անձամբ ես աշխարհի լեզուների շարքում կավելացնեի ևս մեկը՝ **թարգմանական լեզուն**, որով հնարավոր են դառնում ազգերի, երկրների, մշակույթների և հենց նույն լեզուների փոխհարաբերություններն ու փոխանակումը, որն էլ իր հերթին ծնում է այդքան բաղձալի **համակեցությունը**:

Արարատ Ղուկասյան

«Արարատ» Հայկական Միության նախագահ

«Հայրենիք» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր

